

Հաստատված է

*Չինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2022 թվականի ապրիլի 20-ի թիվ 1 որոշմամբ*

**Չինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների
հատուցման հիմնադրամի գործադիր հանձնաժողովի ձևավորման, գործունեության
և լուծարման կարգը
Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ**

1.1 Սույն կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում հիմնադրված և գործող Չինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամի գործադիր հանձնաժողովի ձևավորման, գործունեության, նիստերի գումարման և վարման, լուծարման կարգը:

1.2 Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Օրենքով սահմանված իմաստներով:

Գլուխ 2. Գործադիր հանձնաժողովի ձևավորումը և կազմը

2.1 Հիմնադրամի ակտիվների պրոֆեսիոնալ կառավարման նպատակով Հիմնադրամի կազմում ստեղծվում է գործադիր հանձնաժողով:

2.2 Գործադիր հանձնաժողովը գործում է Օրենքի, Հիմնադրամի կանոնադրության, սույն կարգի և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված այլ կարգերի հիման վրա:

2.3 Գործադիր հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից, որոնց կազմը հաստատվում է սույն կարգի **Հավելված 1-ով**: Կազմում կատարվող ցանկացած փոփոխության դեպքում կազմը վերահաստատվում է ամբողջությամբ:

2.4 Հիմնադրամի տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է գործադիր հանձնաժողովի անդամ:

2.5 Հիմնադրամի տնօրենը և գործադիր հանձնաժողովի մյուս անդամները պետք է ունենան ակտիվների կառավարման բնագավառում մասնագիտական փորձ:

2.6 Գործադիր հանձնաժողովի անդամները նշանակվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից անժամկետ:

Գլուխ 3. Գործադիր հանձնաժողովի գործառույթները

3.1 Հիմնադրամի գործադիր հանձնաժողովի գործառույթներն են հիմնադրամի միջոցների կառավարման ներդրումային մարտավարությանը, ռիսկերի ընդունելի մակարդակին և ներդրումային գործունեության ընթացիկ կոորդինացմանն առնչվող խնդիրների քննարկումը:

3.2 Սույն կարգի 2.1 կետում նշված գործառույթներն իրականացնելու նպատակով գործադիր հանձնաժողովը

- ՀՀ ֆինանսական շուկայում և միջազգային ֆինանսական շուկաներում առկա միտումների վերլուծության և վերջիններիս զարգացման հնարավոր ուղղությունների կանխատեսման հիման վրա՝ սահմանում է հիմնադրամի միջոցների ներդրումային մարտավարական ծրագրերը,
- Վերլուծում և գնահատում է անցած ժամանակահատվածում հիմնադրամի միջոցների կառավարման կատարողականը,
- Վերլուծում և գնահատում է արտաքին կառավարիչների կողմից կառավարվող պայուսակի կատարողականը,
- Վերլուծում և գնահատում է միջոցների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նոր ներդրումային գործիքների կիրառման նպատակահարմարությունը,
- Վերլուծում և գնահատում է ուղենիշային պայուսակի և ներդրումային ուղեցույցների վերանայման անհրաժեշտությունը,
- Վերլուծում և գնահատում է նոր ներդրումային գործընկերների հետ համագործակցության նպատակահարմարությունը,
- Ներկայացնում է հաշվետվություններ (եռամսյակային պարբերականությամբ) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին,
- Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված սահմանափակումների շրջանակներում կայացնում է ներդրումային որոշումներ,
- Հսկողություն է կայացնում կայացված որոշումների կատարման նկատմամբ,
- Իրականացնում է օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված կարգերով այլ գործառույթներ:

Գլուխ 4. Գործադիր հանձնաժողովի գործունեության և նիստերի գումարման կարգը

4.1 Գործադիր հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

4.2 Գործադիր հանձնաժողովի նիստերը գումարվում են «Չինձառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի գտնելու վայրում: Գործադիր հանձնաժողովի նիստերը կարող են նաև անցկացվել հեռակա կարգով: 4.3 Գործադիր հանձնաժողովի արտագնա և արտահերթ նիստ կարող է գումարվել գործադիր հանձնաժողովի նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ գործադիր հանձնաժողովի նախագահի պարտականությունները իրականացնող անդամի նախաձեռնությամբ:

4.4 Գործադիր հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ:

4.5 Գործադիր հանձնաժողովի նիստերն անցկացվում են փակ նիստի է գործելակարգով:

4.6 Գործադիր հանձնաժողովի նիստերին, առանձին հարցերի քննարկումների ժամանակ, կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք, որոնց ցանկը, ըստ հարցերի սահմանվում է գործադիր հանձնաժողովի տվյալ օրվա նիստի օրակարգով:

4.7 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները կարող են մասնակցել հանձնաժողովի բոլոր նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

4.8 Գործադիր հանձնաժողովի նիստը նախագահում է Գործադիր հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում Գործադիր հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

4.9 Գործադիր հանձնաժողովի նիստում նախագահողը՝

(ա) վարում է գործադիր հանձնաժողովի նիստերը,

բ) օրակարգի շրջանակներում ձայն է տալիս ելույթների համար,

գ) զեկուցողին ուղղված հարցերի և ելույթների համար ձայն է տալիս ըստ հաջորդականության,

դ) իրականացնում է կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4.10 Գործադիր հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է գործադիր հանձնաժողովի 5 անդամներից առնվազն 3-ը:

4.11 Գործադիր հանձնաժողովի եզրակացությունը տրվում է բաց քվեարկության արդյունքներով՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ, ընդ որում՝ գործադիր հանձնաժողովի անդամներն ունեն հավասար ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում գործադիր հանձնաժողովի նախագահողի ձայնը որոշիչ է:

4.12 Գործադիր հանձնաժողովի նիստերը ձայնագրվում են, ըստ անհրաժեշտության նաև արձանագրվում իրավաբանի կողմից:

4.13 Գործադիր հանձնաժողովի որոշումները ըստ անհրաժեշտության փաստաթղթավորվում են:

4.14 Գործադիր հանձնաժողովի նիստերի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստման աշխատանքները կոորդինացնում է Հիմնադրամի իրավաբանը և վերահսկում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:

4.15 Գործադիր հանձնաժողովի որոշումները չեն կարող հակասել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ընդունված ներդրումային քաղաքականության ծրագրին և ակտիվների կառավարման քաղաքականությանը:

4.16 Գործադիր հանձնաժողովի նիստերին ներկայացվող փաստաթղթերի նախապատրաստման գործընթացը կոորդինացնում է Հիմնադրամի իրավաբանը:

4.17 Գործադիր հանձնաժողովի նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերը, դրանց վերաբերյալ նյութերը, ինչպես նաև այլ անհրաժեշտ փաստաթղթերը գործադիր հանձնաժողովի նիստի գումարման օրից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով Հիմնադրամի իրավաբանը ներկայացնում է գործադիր հանձնաժողովի անդամներին:

4.18 Օրակարգի վերջում, օրակարգում այլ հարցեր ընդգրկված լինելու դեպքում, որպես վերջին հարց գրվում է «Այլ հարցեր»: Այլ հարցերը, ինչպես նաև այդ հարցերին վերաբերող նյութերը, գործադիր հանձնաժողովի անդամներին առանձին ցուցակի տեսքով ներկայացվում են նիստը սկսվելուց առնվազն չորս ժամ առաջ:

Գլուխ 5. Գործադիր հանձնաժողովի լուծարումը

5.1 Գործադիր հանձնաժողովը լուծարվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Գործադիր հանձնաժողովի լուծարման վերաբերյալ որոշման ընդունման միջոցով:

Հավելված 1

Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի գործադիր հանձնաժողովի ձևավորման, գործունեության և լուծարման կարգի

Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի Գործադիր հանձնաժողովի կազմ

Հ/Հ	Զբաղեցրած պաշտոն	Անուն Ազգանուն
1	Գործադիր հանձնաժողովի նախագահ	Իրինա Սեյլանյան
2	Հանձնաժողովի նախագահի տեղակալ	Կարինե Սարգսյան
3	անդամ	Գայանե Արսենյան
4	անդամ	Ջոզեֆ Միմոնյան
5	անդամ	Լուսինե Զուրաբյան